

2014 թվականի հունվարի 21 -ին ժամը 14⁰⁰ –ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի անդամների ընդհանուր ժողով

Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Վարդան Միրզախանյանը: Համայնքի անդամներից ներկա էին 40 բնակիչներ, դպրոցի տնօրենը, գյուղապետարանի աշխատակիցներ և ավագանու անդամների 7-ից 5-ը:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2013 թվականի տարեկան կատարած աշխատանքների մասին Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Մ.Մկրտչյան

Հարգելի Ծաղկալանջ համայնքի բնակիչներ, հյուրեր. Ձեզ են ներկայացնում 2013 թվականի ընթացքում գյուղապետարանի և ավագանու կողմից կատարած աշխատանքների հաշվետվությունը:

2013 թվականի ընթացքում գյուղապետարանը և ավագանին իր գործունեությունը իրականացրել է 2013 թվականին կազմած աշխատանքային ծրագրին համապատասխան՝ ըստ բնագավառների: Բարելավել ենք հանդամիջյան ճանապարհները, ամիսը 4 անգամ կատարվել է աղբաթափություն, որի համար հատկացվել է 996.000 դրամ գումար:

Համայնքի 11, 15 և 16-րդ փողոցներում կատարվել է խճապատում, որի համար նախատեսվել է 300.0 հազար դրամ: Ջրամատակարարման նպատակով կատարվել է ջրաչափերի տեղադրման աշխատանքներ՝ շուրջ 100 հատ:

Կազմակերպվել և հաշվետվություններ են ներկայացվել վիճակագրական ծառայությանը անասնազխաբանակի, բնակչության սեռատարիքային շարժի, բերքահավաքի և գարնանացանի տվյալների մասին: Եկամուտների, ծախսերի և աշխատավարձի մասին հաշվետվություններ են ներկայացվել Արմավիրի մարզպետարան, եռամսակային հաշվետվություններ են ներկայացվել հարկային

տեսչություն: Կադաստրի տարածքային ստորաբաժանում է ներկայացվել շենքերի և շինությունների կառուցման և քանդման շարժի մասին:

Համայնքի դպրոցի և գյուղի երիտասարդության հետ համատեղ կազմակերպվել է երիտասարդական միջոցառում նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, որի համար 350.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 68 ամյակին և Շուշիի ազատագրման 21 ամյակին ,որի համար 400.000 դրամ է հատկացվել: Կազմակերպվել է նաև միջոցառում նվիրված դպրոցի շրջանավարտների վերջին զանգին,հատկացվել է 50.000 դրամ:

2013 թվականի ընթացքում ստացվել և պատասխանվել է 50 գրություն: Կայացել է ավագանու 9 նիստ և քննարկվել է 30 հարց, ընդունվել է համապատասխան որոշումներ:

Համայնքն ունի 28 նպաստառու ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներին իրենց դիմումների և ավագանու որոշմամբ տրվել է դրամական օգնություններ՝ 2.290.000 դրամ:

2013 թվականի ընթացքում համայնքում ծնվել է 24 երեխա, արձանագրվել է 14 մահ, անուսնացողների թիվը հասնում է 15 -ի:

Ընդունվել է գյուղապետի 46 որոշում, ընդունվել է 78 դիմում, որոնք բոլորն էլ ստացել են համապատասխան լուծումներ: Համայնքի բնակչությանը տրվել է համապատասխան ոլորտի 552 տեղեկանքներ:

2013 թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հասցրած վնասների պատճառով հողի հարկի և վարձակալական հողի վարձավճարների գանձումները բնակչության անվճարունակ լինելու պատճառով թերի է կատարվել: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ծաղկալանջ համայնքին է հատկացրել 1 792 000 դրամ հողի հարկի փոխհատուցում և 8 000 000 դրամ ոռոգման ջրի վարձավճարների փոխհատուցում:

2013 թվականի ընթացքում բնակիչներից գանձվել է 3.209.600 դրամ հողի հարկ, որը կազմում է տարեկան պլանայինի 67.7%-ը, 1.660.800 դրամ գույքահարկ, որը

կազմում է պլանայինի 66.0%-ը, և վարձակալական հողի վարձավճար 589.200 դրամ՝ պլանայինի 85.4%-ը:

Գյուղապետարանը աշխատավարձի պարտք չունի:


Գյուղում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կցանկանայի տեղեկացնել Ձեզ և մարզպետարանի ներկայացուցչին, քանզի նշված խնդիրները գյուղապետարանի միջոցներով հնարավոր չէ իրականացնել.

1. Մշակույթի տունը վերակառուցման և վերանորոգման անհրաժեշտություն ունի, բնակչությունը մշակութային միջոցառումներ չեն կարող կատարել, անգամ իր ազատ ժամանակը սովորական խաղերով անցկացնելու վայր չունի
2. Չի գործում մանկապարտեզը՝ համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով, նախկին շենքը կարիք ունի վերանորոգման:
3. Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ հողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է գերծախսի ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:
4. Խնելու ջրի ներքին ցանցը նույնպես անմխիթար վիճակում է ,որը վերանորոգման կարիք ունի:

Սույն թվականի դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել համայնքի ղեկավարի ընտրություն , որի արդյունքում վերընտրվել են և կաշխատեն հետագա տարիներին նույնպես արդարացնել ձեռք բերված վստահությունը:

Գյուղում կատարվող բոլոր երևույթները գյուղապետարանի ուշադրության կենտրոնից դուրս չեն մնում, կա սերտ կապվածություն գյուղացու և գյուղապետարանի միջև: Սիրելի համագյուղացիներ Ձեր բոլոր գրավոր և բանավոր դիմումները և խնդրանքները քննարկվում են և հնարավորության սահմաններում տրվում են համապատասխան լուծումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎՈՐ



Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

2014 թվականի հունվարի 21 -ին ժամը 14⁰⁰ -ին կայացած ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջ համայնքի անդամների ընդհանուր ժողով

Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ վարդան Միրզախանյանը: Համայնքի անդամներից ներկա էին 40 բնակիչներ, դպրոցի տնօրենը, գյուղապետարանի աշխատակիցներ և ավագանու անդամների 7-ից 5-ը:

Ժողովի նախագահ՝

Ս. Մկրտչյան

Քարտուղար՝

Ս. Սենիքերիմյան

Օրակարգ - ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու 2013 թվականի ընթացքում աշխատանքային գործունեության հաշվետվությունը:

Ձեկ՝ Ս. Մկրտչյան

Արտահայտվեցին Համլետ Ամիրջանյանը, Ղազար Ղազարյանը, Նորայր Մալխասյանը, Լևոն Գրիգորյանը: Նրանք ներկայացրեցին գյուղի հիմնախնդիրների մասին, որոնք անհրաժեշտ են բնակչության կենսամակարդակի բարձրացման համար.

1. Մշակույթի տան վերանորոգման անհրաժեշտությունը
2. Սթեբների իրացման հարցը
3. Մանկապարտեզի շենքի վերանորոգման անհրաժեշտությունը
4. Ներտնտեսային ոռոգման ցանցը գրեթե ամբողջությամբ չողային հունով է, կորուստը մեծ է և այն հանգեցնում է ջրօգտագործողների արդարացի դժգոհությանը:

Ժողովի նախագահ՝

Ս. Մկրտչյան

Քարտուղար՝

Ս. Սենիքերիմյան

